ԷԼԼԱԴԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՋԱԽՆԵՐԸ. ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԸ՝ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Հոդվածում քննարկվում է Սյունիքի կրթամշակութային օջախների դերը և ներկայացվում Տաթևի հռչակավոր վանքը՝ իբրև Սյունյաց աշխարհի հոգևոր, մշակութային, ուսումնական, գիտական կենտրոնի բազմադարյա պատմությունը: Նշանակալի է նաև Տաթևի վանքի խաղացած դերը Սյունիքի ազգային հին մատենագրության մեջ:

Կարևորվում է նաև Տաթևի միջնադարյան բարձր տիպի դպրոցը որպես քրիստոնյա աշխարհի առաջին համալսարան: Տաթևի հռչակավոր վանքը խոշոր դեր է խաղացել ոչ միայն Սյունիքի, այլև ընդհանրապես հայ ժողովրդի ազգային, քաղաքական և մշակութային կյանքում: Հոդվածը տալիս է նաև մանրամասն նկարագրություն Տաթևի վանքի հնագույն գրչության մասին: Տաթևի վանքը դառնում է հայ հնագույն գրչության խոշորագույն կենտրոններից մեկը:

Բանալի բառեր՝ *Սյունիք, կրթամշակութային օջախներ, հոգևոր մշակութային կենտրոն, Տաթևի վանք, քրիստոնեական երգեր, հեթանոսական գիտություն,բարեգործություն, աստվածաբանություն, մատենադարան:*

Սյունյաց աշխարհն իր գավառներով, քաղաքական, մշակութային և հոգևոր կյանքով կարևոր դեր էր խաղում հայ ժողովրդի պատմական ընթացքի մեջ՝ կրելով նրա ազգային գոյատևման դժվարությունները և միաժամանակ՝ կիսելով հաղթանակի քաղցր պտուղները:

Անշուշտ, Սյունիքի և նրա գավառների համար եղել են նաև փորձության ծանր պահեր, սակայն ազգային և հոգևոր ինքնագիտակցության առաջնային գաղափարը երբեք չի լքել լեռնաբնակ մարդկանց:

Սյունիքում մելիքական տների ձևավորումը երկրամասի թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական, ինչպես նաև մշակութային կյանքի համար ունեցել է բարերար ազդեցություն:Մելիքները դարձան հայ հոգևոր և մշակութային կյանքի զարգացման հովանավորներ, ձեռնարկեցին բազմապիսի շինարարական աշխատանքներ, վերանորոգվեցին վանքերն ու եկեղեցիները, կառուցվեցին կամուրջներ ու ջրանցքներ: Նրանք դարձան նաև հայ ազատագրական պայքարի գաղափարների ակտիվ կրողներ և այդ շարժման մասնակիցներ:

Սյունիքում քրիստոնեական շրջանի մշակույթը սկզբնավորվում է Գրիգոր Լուսավորչի կողմից 320թ. Սյունյաց հոգևոր թեմի հիմնադրմամբ, թեպետ հայտնի է, որ քրիստոնեական վարդապետությունն այստեղ արմատներ է ձգել տակավին առաջին դարում, երբ քարոզչական գործունեություն էր ծավալել Բարդուղիմեոս առաքյալը:

V դարը հայ մշակութային պատմության մեջ ընդունված է կոչել նաև Թարգմանչաց դար: Սյունիքում V դարի սկզբին ստեղծվեց ժամանակի ամե-

նանշանավոր գիտակրթական կենտրոնը, ուր հատկապես աչքի ընկան թարգմանիչները: Պատահական չէ, որ հենց Սյունիքի դպրոցն իրականացրեց հայ թարգմանչական արվեստի գլուխգործոցի՝ «Աստվածաշնչի» հայերեն թարգմանությունը: Դա հայերեն գրերով գրված առաջին գիրքն է, որի վրա հենվեց հայ գրականության՝ հետագայում կառուցված շենքը: «Հայոց մեջ նախաթոռ վարդապետությունը և գրքերի մեկնության ու թարգմանության իրավունքը միայն սրանց շնորհվեցին Սուրբ Սահակի և երանելի վարդապետ Մեսրոպի կողմից» [5, էջ 309]:

Տաթևի համալսարանի գիտական, մշակութային, կրթական ժառանգության մեջ իր առանձնահատուկ տեղն է գրավում Տաթևի վանքի գրչության կենտրոնը, որտեղ հետագայում ստեղծվեց գրչության բարձր տիպի դպրոց, դարձավ մեսրոպաստեղծ գրչության ավանդների շարունակողն ու գրչության արվեստի լավագույն պաշտպանողը:

Մշակութային մյուս կենտրոնների նման, Տաթևի վանքի գրչության կենտրոնի գործունեությունը, տարբեր ժամանակահատվածներում տարբեր ծավալ է ունեցել:

Սյունիքի գրչության կենտրոնը (սկզբում Շաղատում, այնուհետև Տաթևում) մշակութային այն օջախներից էր, որ, սկիզբ առնելով հայերեն գրերի ստեղծման արշալույսին, հարատևել է դարեր և հանդիսացել մեր մատենագրության ստեղծման, զարգացման ու պահպանման օրրան:

Մշակութային այս կենտրոնում ստեղծագործել են հայ մատենագրության, մանկավարժության, գրչության ու մանրանկարչության բազմաթիվ ներկայացուցիչներ: Այստեղ հայերեն գիր ու դպրություն են սովորել սերունդներ, որոնց ջանքերով էլ մեզ են հասել մեր հոգևոր և նյութական մշակույթի հպարտությունը կազմող բազմաթիվ ձեռագրեր:

Տաթևի մշակութային կենտրոնը հայ միջնադարյան դպրոցների շարունակական շղթայի կարևոր և ամուր օղակներց մեկն է, որի ակունքները հասնում են V դար: Գրչության արվեստի ծաղկումն սկսվում է IX դարից և համահայաստանյան նշանակություն ձեռք բերում X դարի առաջին կեսին:

Ստեղծագործելով, արտագրելով, տարածելով նախնիների հայրենաշունչ երկերը՝ նրանք վառ էին պահում հայ ժողովրդի հայրենասիրությունը:

Տաթևի վանքի գրչության դպրոցը շարունակությունն ու հաստատումն է Մեսրոպ Մաշտոցի կողմից Սյունիքում ստեղծված գրչության վարդապետանոցների [7, էջ 309]:

Այս կարգի բարձր տիպի գրչության դպրոցներում էր զարգանում և հարստանում գրչության արվեստը: Խմբագրվում, սրբագրվում, լրացվում ու ճշգրտվում էր ձեռագրական մշակույթը: Այդ դպրոցներում սեփական ուժերով գրվում էր և ձեռք էին բերվում ձեռագիր մատյաններ՝ վերանորոգելով ու պահելով տեղական մատենադարաններում, այսպիսով ձեռագրերը փրկում էին կորստից՝ դարձնելով ուսումնասիրության կամ ընդօրինակության հիմք:

Այստեղ ստեղծվել են մատենագիտական, պատմական, մեկնողական, մանկավարժական բազմաթիվ գիտական երկեր: Տաթևի դպրոցի աշակերտ-

ները միաժամանակ նկարչության ուսուցիչներ էին և իրենց արժանի փոխարինողներն էին պատրաստում:

Տաթևի վանքը հազարամյա ուսումնական ձեռագիր մատյանների կյանք է ունեցել: Մեզ են հասել այստեղ ստեղծված հսկայական քանակությամբ ձեռագրեր, որոնք պահվում են Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում, որոնք մի կողմից հարստացնում են հայ մշակույթի գանձարանը, մյուս կողմից՝ մնում որպես խոսուն հուշարձաններ իրենց ստեղծագործողների և փրկողների հիշատակին: X դարի առաջին տասնամյակներին Տաթևի վանքը դառնում է հայ գրչության խոշորագույն կենտրոններից մեկը:

Տաթևի բարձր տիպի դպրոցի «մի բաժնում ուսուցանում էին երաժշտության շատ երկրներից և քաղաքներից եկածներին, մյուս բաժանմունքում գեղանկարչության տարբեր տեսակներ, երրորդում քրիստոնեական երգեր և ոչ քրիստոնեական, հեթանոսական գիտություններ» [3, էջ 143]:

VII դարի երկրորդ կեսից սկսած՝ արաբական արշավանքները Հայաստանում ընդհատեցին սկիզբ առած մշակութային առաջընթացը:

Արաբական տիրապետության ժամանակաշրջանում մեծապես տուժեց հայ ժողովրդի ոչ միայն նյութական, այլև, հոգևոր մշակույթը գիրն ու գրականությունը, գիտությունն ու արվեստը: Սակայն դադարը երկար չտևեց: IX դարում հայ ժողորդի ազգային-ազատագրական պայքարը պսակվեց հաջողությամբ:

Պատմական Հայաստանի վրա հաստատվում են անկախ իշխանություններ: Բագրատունիները իշխում էին երկրի կենտրոնական տարածքում՝ Շիրակում, Արարատյան դաշտավայրում, Արագածոտնում, Արծրունիները՝ Վասպուրականում, Լոռի – Ձորագետում՝ Կյուրիկյանները: Անկախ իշխանություններ են հաստատվում Սյունիքում, Կարսում:

Հայկական պետականության և երկրի անկախության վերականգնումը, IX-X դարերում տեղի ունեցող հասարակական-տնտեսական վերելքն ու առաջադիմությունը նոր պայմաններ ստեղծեցին հայ մշակույթի՝ գիտության, արվեստի, գիր ու գրականության, առաջին հերթին՝ դպրոցի, կրթական գործի զարգացման համար:

Բարձրագույն տիպի ուսումնական հաստատությունները՝ վարդապետարանները, միջնադարյան հասարակական մտքի և հայ դպրության կարևոր կենտրոններ էին:

Ինչպես այլ երկրներում, նույնպես և Հայաստանում միջնադարյան վանքերն իրենց գործունեությամբ տարաբնույթ են եղել: Որոշ վանքեր զբաղվել են կրոնական ինքնանվիրումով ու քարոզով, նաև բարեգործությամբ, հիվանդների բուժումով, ծերերի խնամակալությամբ և այլն: Մի մասն էլ գերազանցապես կրթական-մշակութային գործունեություն է ծավալել:

IX-XI դարերում դպրոցներ էին կազմակերպվել երկրի համարյա բոլոր գավառներում, այդ թվում և Սյունիքում, որոնցից շատերը դարձան դպրության խոշոր կենտրոններ, ունեցան նշանավոր ուսուցիչներ և արժանավոր աշակերտներ: Վերջիններս խոշոր դեր խաղացին հայ ժողովրդի ինքնագիտակ-

ցության, ինչպես նաև հայ մատենագրության զարգացման գործում: Ուսումնագիտական այդ կենտրոններում հանդես եկան միջնադարի հայ ականավոր մատենագիրները, պատմիչները ու փիլիսոփաները, ճարտասաններն ու քերականները, երաժիշտները, գրչության ու արվեստի շատ մշակներ [5,էջ 79]:

Տվյալ ժամանակաշրջանի ուսումնականների պատկերացմամբ, ուսումնագիտական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ են համարվել չորս պայմաններ «...առաջին՝ զի կամք վարդապետին լինի ուսանողաց և այն առանց ագահութեան կամ փառասիրութեան, երկրորդ, ջերմ սեր ուսանողացն, երրորդ՝ ժամանակն խաղաղության, չորրորդ՝ տեղիքն անապատ և անդորր»:

Վարդապետարաններին հովանավորել են թագավորները, իշխանները և եպիսկոպոսական աթոռները: Առանձին վարդապետարանները հիմնադրումն ու գոյատևումը պայմանավորված է եղել, առավելապես նրանց ուսուցչապետների նախաձեռնությամբ և աննկուն ջանասիրությամբ: Միջնադարյան վարդապետարանները միևնույն մակարդակը չեն ունեցել և հավասար ճանաչում չեն գտել, մեծ վարդապետի հմտությունից և վայելած հռչակից մեծապես կախում ուներ, հարկավ, այն դպրոցի հռչակն ու դիրքը, որը նա ղեկավարում էր:

Վարդապետական դասընթացները մեր դպրության մեջ, սկսած ամենավաղ շրջանից, հունական դպրության նմանությամբ, մշակվել և իրացվել են ուսումնագիտական բարձրագույն կենտրոններում: Իսկ հունական դպրության դասընթացները, որոնք հայտնի են «Յոթ ազատ արվեստներ» անվամբ, ըստ էության, կիրառեցին նաև XII-XV դարերի եվրոպական միջնադարյան համալսարաններում:

«Յոթ ազատ արվեստներ», իրենց հերթին, ունեին երկու ստորաբաժանում՝ Եռյակ և Քառյակ գիտություններ:

Եռյակ գիտություններ էին համարվում քերականությունը, ճարտասանությունը և դիալեկտիկան, իսկ Քառյակ՝ մաթեմատիկան, երկրաչափությունը, աստղաբաշխությունը և երաժշտությունը:

Միջնադարի հայ վարդապետարաններում, բացի «Յոթ ազատ արվեստներից», ուսումնական ծրագրով անցնում էին աստվածաբանություն, փիլիսոփայություն, մեկնողական արվեստ, մատենագրություն և պատմություն:

Տաթևի վարդապետարանի հիմնադրումը կարևոր դեր խաղաց Սյունյաց աշխարհի հոգևոր-մշակութային կյանքում: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ «Վայրը բարձր է ու հաղթահատակ, օդը մաքուր ու խիստ առողջարար՝ շրջապատված բարձր ու սրածայր լեռներով»:

Պատմիչը մանրամասն նկարագրում է 895-ին հիմնադրված Տաթևի մեծ եկեղեցին, հարակից մյուս շինությունները, որի իրողությունը հաստատվում է նաև որմերի վրա եղած արձանագրություններով:

895թ. Տաթևի տաճարին կից, միաժամանակ հիմնադրվել է Տաթևի վարդապետարանը՝ իբրև բարձրագույն գիտաուսումնական կենտրոն:

Ստեփանոս Օրբելյանը Տաթևը բնութագրում է իբրև «Առաջին գլուխն ամենացուց վանօրէից և աղբիւր շնորհաբաշխութեանն տանն Սիսականն...»:

Համալիրն ունեցել է նաև բազմաթիվ գետնափոր գաղտնարաններ, որոնցից մի քանիսը ծառայել են իբրև «գրատներ»:

Տաթևի վարդապետարանն աչքի է ընկել իր բարձրագույն կրթությամբ, ուսումնագիտական առարկաների խորաքնին բնույթով, երաժշտական արվեստի բացառիկ զարգացմամբ, մանրանկարչությամբ գեղագիտական տեսության և կիրառության կատարելությամբ, գրչության արվեստի հմտությամբ:

Տաթևի կաճառի այս կարգի բարեմասնությունների շնորհիվ պարբերաբար այդտեղ էին գալիս ոչ միայն ուսումնասիրողներ տարբեր վայրերից փորձի և հմտության փոխանակման համար, այլև թագավորներ ու իշխաններ՝ առատ նվերներով: Այստեղ ուսումնառության են եկել Հայաստանի մյուս աշխարհներից:

«Տաթևը,-գրում է պրոֆեսոր Աբգար Մովսիսյանը,- ընդհանրապես, հայոց կրթության կազմակերպման և զարգացման գործում վիթխարի դեր է խաղացել: Այդ տեսակետից Տաթևը հայ միջնադարյան հոգևոր կենտրոններից ամենաինքնատիպն ու դասականն էր, որը, առաջին հերթին, տարբերվում էր շատ-շատերից հատկապես իր դպրոցական կարգով ու հարատևությամբ»:

Տաթևի բարձր տիպի դպրոցը, որպես Սյունյաց կրթության վարդապետարան, վեկառուցվելով և զարգանալով, հիմք է հանդիսացել Միջնադարյան Հայաստանի խոշորագույն ուսումնական հաստատության՝ համալսարանի ստեղծման համար:

Տաթևի բարձրագույն դպրոցի ստեղծումը, իսկ այնուհետև ՝ համալսարանի վերափոխումն ու բարգավաճումը, անմիջականորեն կապված են նաև Սյունիքի թագավորության ստեղծման հետ, որի հոգևոր, ուսումնական, գիտական, մշակութային կենտրոնն էլ դարձավ Տաթևը:

Այժմ՝ արդեն ազգային – պետական համակարգի առկայության պայմաններում, կրթության գործը դառնում է ընդհանուր մտահոգության առարկա: Բոլորովին չխափանելով անհատական- արհեստանոցային, այսպես ասած մասնավոր ուսուցման կառույցը՝ պետական և հոգևոր նշանավոր գործիչները մտահոգվում են ուսումնական խոշոր հաստատությունների ստեղծմամբ, որտեղ պատրաստվելու էին բարձրորակ կադրեր:

Այդ մեծ գործի նախաձեռնողները լավ էին հասկանում, որ գիտության և մշակույթի բնագավառներում լայն ու խոր գիտելիքներ հաղորդելու համար անհրաժեշտ են կանոնակարգված ուսումնական հաստատություններ: Նման կրթարաններում միայն հնարավոր էր երիտասարդ սերնդին ծանոթացնել ոչ միայն ազգային հնամենի ավանդույթներին, այլև հունահելլենական և բյուզանդական քաղաքկրթության նվաճումներին:

Առանց այդ մշակույթի հետ անմիջական շփումների, դրանցից ուսանելու՝ իսկական առաջադիմություն նույնիսկ ազգային շրջանակներում չէր կարող լինել:

Սյունիքի պետականության հաստատումը X դարում խթան հանդիսացավ Սյունիքի մշակույթի բոլոր բնագավառների նոր առաջընթացի համար [5,էջ 79]:

Ստեղծվեցին մատենական նկարչության, ճարտարապետության, քանդա-

կագործության և որմնանկարչության՝ համաշխարհային ճանաչման արժանացած գոհարներ:

Հայկական ճարտարապետության և արվեստի զարգացման մեջ իր ուրույն տեղն ունի Սյունիքի գեղարվեստական դպրոցը, որը կազմավորվել է IX- X դդ, սահմանագծում: Այն իր գոյությունը պահպանեց երկու դարից ավելի, և այդ ընթացքում Սյունիքի տարբեր գավառներում ստեղծվեցին բազմաթիվ հոյակերտ գործեր: Մշակութային այնպիսի մի նշանավոր կենտրոն, որոնցից մեկն էլ նշանավոր Բղենո Նորավանքն էր: Հուշարձաններից առանձնացնում ենք Տաթևի Պողոս-Պետրոս եկեղեցին՝ կառուցված 895-906 թթ., Սյունյաց գահերից իշխանի Աշոտի նախաձեռնությամբ:

Մշակութային նոր վերելքը դրսևորվեց նաև ճարտարապետության հետ անմիջականորեն զուգորդված դեկորատիվ-քարակոփ արվեստի բնագավառում՝ արտահայտվելով տաճարների գեղարվեստական ձևավորմամբ և հատկապես արտաքին ճակատների զարդարմամբ քանդակներով:

X-XI և հետագա դարերում ճարտարապետական հուշարձանների հարդարանքը նոր զարգացում է ապրում, հանդես են գալիս դեկորատիվ նշանակություն ունեցող նոր ձևեր: Աճում է զարդարվեստի նշանակությունը: Քանդակազարդ հարդարանքը դառնում է կառուցվածքի անբաժանելի մասը: Առավել ճոխ են ձևավորվում տաճարների շքամուտքները և այլ մանրամասները, բուսական քանդակներն ավելի են ոճավորվում, երկրաչափական ձևերն սկսում են մանրանալ և ձեռք բերել բարդ ու նուրբ գծագրություն:

X-XI դարերի հայկական միջնադարյան քանդակագործության պատմության համար ուշագրավ է Բղենո Նորավանքը, որը Աղթամարից հետո այդ ժամանակներից մեզ հայտնի միակ շինությունն է՝ զարդարված հարուստ քանդակներով: Վերջիններս տարբերվում են Աղթամարի քանդակներից նրանով, որ ներկայացնում են միայն Քրիստոսի հետ կապված տերունական պատկերազարդ շարք: Այս հանգամանքն ինքնին ցույց է տալիս երկու կապված տերունական պատկերազարդ շարք: Այս հանգամանքն ինքնին ցույց է տալիս երկու կառույցների նպատակային տարբերություն: Եթե Աղթամարի Ս. Խաչի քանդակներն ունեն ավելի ընդարձակ գաղափարական բովանդակություն, ապա Բղենո Նորավանքի քանդակները դուրս չէին գալիս կրոնական պատկերացումների շրջանակներից:

Քառորդ դար անց՝ Տաթևի Պողոս –Պետրոս եկեղեցու պատերը ծածկվում են որմնանկարներով, ընդ որում՝ բոլոր թեմաներին ու կերպարներին կից ուղեկցող հայատառ բացատրություններով:

Տպավորիչ է հատկապես արևմտյան պատն զբաղեցնող «Ահեղ դատաստան» հսկայան հորինվածքը: Ժամանակին քրիստոնեական աշխարհում «Ահեղ դատաստան»-ի նման հուժկու պատկեր չի հիշատակվում: XI-XII դարերից հայտնի են Իտալիայի Տորչելլո քաղաքի Սուրբ Աստվածածնի, ինչպես նաև Նովգորոդի Ներիդիցայի եկեղեցու համանուն պատկերներ: Սակայն ինքնատիպության և գեղարվեստական արժանիքների առումով մասնագետները նախապատվությունը տալիս են Տաթևին:

Նշված հուշարձանները, գրեթե առանց բացառության, բարձր արվեստի գործեր են: Այդ մասին պահպանվել են նույնիսկ ժամանակակիցների հիացական խոսքերը: Տաթևի որմնանկարների կապակցությամբ Ստեփանոսը գրում է.«Տեսողաց տեսարանին շլանային ի նայելն և երբեք ոչ թուէր ի դեղոց և յերանգոց, այլ համայն կենդանիք, յորոց զարհուրել խուսափէն տեսօղքն»:

Մատենական նկարչության հուշարձաններից հիշատակենք ողջ քրիստոնեական արվեստում հայտնի «Էջմիածնի ավետարանը», որը գրվել է 989թ. Տաթևից մի քանի կիլոմետր հեռու գտնվող Բղենո-Նորավանքում: Ճարտարապետության և կերպարվեստի այդ կոթողների թվարկումը նպատակային բնույթ է կրում ցույց տալու, որ նման բարձր մակարդակը կարող էր պահպանվել միայն տեսագործնական նախադրյալների առկայությամբ: Դա նշանակում է, որ եղել են այն հաստատությունները սահմանափակ արհեստանոցային, դպրոցական կամ համալսարանային, որոնք ապահովում էին կադրերի պատրաստումը:

Տաթևի և Բղենո Նորավանքի քանդակները մեծ կապ ունենալով Տաթևի և Բղենո Նորավանքի մանրանկարչության ու որմնանկարչության հետ վկայում են Տաթևի բարձրագույն դպրոցի մակարդակի և նրանում ամբողջական դպրոցի գոյության մասին:

Տաթևի՝ X դարի բարձր տիպի դպրոցի գոյության ու այդտեղ նկարչության և այլ առարկաների դասավանդման մասին եզակի տեղեկություններ է հաղորդում Սյունիքի պատմագիր Ստեփանոս Օրբելյանը. «Բոլոր վանքերից Տաթևը նշանավոր էր ոչ միայն շինություններով, այլև փայլում էր շուրջ հինգ հարյուր միաբանների կրոնավորական դասերով: Լի էր խորաքնին փիլիսոփաներով, երաժիշտ- երգիչներով: Ճոխ էր վարժապետարանը՝ վարդապետական կրթումով: Կային նաև անհամեմատելի արվեստավոր նկարիչներ ու գրիչներ: Դրա համար, այսպիսի համբավից հիացած, թագավորները, իշխանները, եպիսկոպոսները գալիս էին տեսության և ընծաներ էին բերում սուրբ ու փառահեղ աթոռին: Այս ամենը կատարեց Տեր-Հովահաննեսը»: Համառոտ, բայց պերճախոս վկայություն:

Տաթևի կրթամշակութային կյանքի պատմությունը ցույց է տալիս, որ X դարի երկրորդ կեսերին վանահայր Տեր-Հովհաննես եպիսկոպոսին փոխարինում է նրա եղբորորդին Հակոբը: Սյունյաց պատմիչի խոսքերով ասած. «Բարձրահասակ ու գեղեցիկ տեսքով տղամարդ հանճարեղ ու իմաստուն, քաղցրաբարո ու հեզահամբույր, լի ամենայն պարկեշությամբ»: Մեծաշնորհ այս վանահոր օրոք ավելի է աշխուժանում Սյունյաց վարդապետարանի ուսումնական, գիտական, մշակութային կյանքը:

Հետամտելով Տաթևի վարժարանում և ընդհանրապես, Սյունյաց տարածքում կերպարվեստի գործունեության ավելի ընդարձակմանը, հարկ է նշել, որ Հակոբն արևմուտքից «բերել է տալիս», հրավիրում է նշանավոր արվեստագետ-նկարիչների:

Վերջիններս, բացի վարժարանում ուսումնատվական աշխատակիցներից, տեղացի վարպետների հետ միասին նկարազարդում են Սյունյաց թեմի

նորակառույց եկեղեցիները: Լսենք պատմիչին. «...Այս Հակոբը Ֆռանկ ժողովրդի հեռավոր աշխարհից բերել տվեց տպիչներ և զառախները և աստվածաբնակ տաճարի հարկերը ամբողջովին, վերևից մինչև ներքև, անսահման ծախսերով նկարել տվեց աստվածագործ սեղանի ճիշտ դիմացը, վերևից՝ երկնքի բոլորակը մեծ կամարի վրա, իսկ նկարները սեղանի շուրջը...»:

IX դարի վերջում և X դարի սկզբում Տաթևի վանքը դառնում է հայ գրչության խոշորագույն կենտրոններից մեկը:

Տաթևի համալսարանի վաղ գոյության վառ ապացույցն է նաև X դարում ժամանակների համար աներևակայելի՝ Մատենադարանի ստեղծման և նրանում ձեռագիր մատյանների քանակը:

Տաթևի մատենադարանն ստեղծվել է IX- X դարերում Տաթևի վանքին կից: Սելջուկների արշավանքների ժամանակ 1169 թ. Ինչպես Տաթևի, այնպես էլ շրջակա վանքերի ձեռագրերը, ապահովության համար, փոխադրվել են Բաղաբերդ:

1170-ին Բաղաբերդը գրաված սելջուկները կողոպտել են և ոչնչացրել են Տաթևի շուրջ 10 հազար ձեռագրեր:

X դարում Տաթևում հիմնվել է մանրանկարչության դպրոց, որտեղ ստեղծվել են հայկական մանրանկարչության բազմաթիվ անկրկնելի գործեր:

Տաթևի մոտ գտնվող Բղենո Նորավանքում է ծնվել հայ գրչության և մանրանկարչության լավագույն և հանրահռչակ հուշարձաններից մեկը « Էջմիածնի Ավետարանը» -ը,որի հազարամյակը 1989թ. նշվեց մեծ շուքով:

«Էջմիածնի Ավետարան» անունը կրող ձեռագիրը, որն այժմ 2374 թվահամարի տակ պահպանվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, գրվել է 989 թ. Հովհաննես գրչի կողմից, Բղենո Նորավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցում: Ձեռագիրը հայտնի է նաև «Փղոսկրյա Ավետարան» անունով, քանի որ ձեռագրի կազմն իրենցից ներկայացնում է փղոսկրյա երկու կողեր, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է 5-ական պատկերազարդ սալիկ:

Բացառիկ է «Էջմիածնի Ավետարան»-ի մանրանկարների դերը հայ մանրանկարչության պատմության մեջ: Նրանում տեղ գտած գեղարվեստական սկզբունքները հետագայում զարգացվեցին Կիլիկիայի և բուն Հայաստանի մանրանկարչության դպրոցների կողմից: Ձեռագրին կցված էր երկու թերթ, որը պարունակում է VI-VII դարերում արված 4 մանրանկարներ: Սրանք մեզ հասած հնագույն հայկական եզակի մանրանկարներ են: Ձեռագիրը վկայում է Տաթևի մանրանկարչական դպրոցի գոյության և հիմնավոր ավանդույթների մասին, իսկ Տաթևի և Բղենո Նորավանքի քանդակները, մանրանկարները, որմնանկարները վկայում են Տաթևի գեղարվեստական ամբողջական դպրոցի գոյության մասին:[1, էջ 228]

Միջնադարյան հայոց կրթության տարեգրության մեջ և կրթամշակութային կյանքում ուրույն տեղ է գրավում Գլաձորի բարձր տիպի դպրոցը կամ համալսարանը: Գրականության մեջ, երևի թե, հայ միջնադարյան որևէ այլ դպրոց կամ համալսարան այնպիսի լայն ու ուշադրության չի արժանացել, ինչպես Գլաձորը:

Նա ժամանակակից է եղել Փարիզի, Պրահայի, Սալամանկի, Քեմբրիջի և այլ նշանավոր համալսարանների:

Այսպիսով, տեսնում ենք, որ Տաթևի համալսարանը, ըստ էության, եվրոպական համալսարաններից ավելի վաղ է ստեղծվել X-XI դարերում:

Տաթևի համալսարանի հռչակը լայն տարածում է ստացել հատկապես Գրիգոր Տաթևացու տնօրինության տարիներին: Նա աշակերտել է Հովհան Որոտնեցուն և նրանից հետո գլխավորել Տաթևի, ապա նաև՝ Ապրակունիսի դպրոցները, միաժամանակ վարելով փիլիսոփայության, աստվածաբանության և քերականության դասընթացներ: Միաժամանակ նա դասավանդել է նաև Մեծոփա և Երևանի բարձրագույն վանական դպրոցներում: Գրիգոր Տաթևացին մահացել է 1409 թվականին՝ 65 տարեկան հասակում և թաղվել Տաթևի վանքում, ուր մինչև այժմ էլ պահպանվել է նրա մատուռ՝ գերեզմանը:

Տաթևի համալսարանի երկրորդ վերածննդի գործում կարևոր դեր է ունեցել Օրբելյան իշխանական ընտանիքը:

Տաթևի համալսարանն ունեցել է 3 լսարան (ուսումնարան)՝ ներքին և արտաքին գրոց, գրչության արվեստի, երաժշտության: Առաջինում ուսումնասիրվել են գլխավորապես հումանիտար և հասարակական գիտություններ, փիլիսոփայություն, ճարտասանություն, քերականություն, պոետիկա, մանկավարժություն, ինչպես նաև մայրենի լեզու, գրականություն, պատմություն և այլն, երկրորդում՝ գրչության արվեստ, գեղագրություն, գրքերի գեղարվեստական ձևավորում, մանրանկարչություն, իսկ երաժշտության լսարանում՝ հին երգ և երաժշտություն, երաժշտության տեսություն [3, էջ 137]:

Տաթևի համալսարանը կապված էր Հայաստանի մշակութային մյուս կենտրոնների և, ամենից առաջ, Մեծոփա վանքի դպրոցի հետ: Տաթևից հետո այն եղել է հաջորդ, առավել արդյունավետ, հռչակավոր ուսումնակրթական կենտրոնը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դավրիժեցի Առաքել, «Գիրք պատմությանց», Երևան, 1990, էջ 228, 240
2. Ձիլֆուղարյան Մ.Մ, Գորիսի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 2002, էջ 56
3. Ձիլֆուղարյան Մ.Մ, Տաթև, Գրչաձորի պատմությունը, հատոր 1, Երևան, 2003, էջ 143:
4. Լեո, Հայոց պատմություն.հ.գ., Երևան, էջ 92
5. Հախվերդյան Ս., Գորիսի պատմություն, Գորիս, 1996,էջ 79
6. Հայկական Սովետական Հանրագիտարան, հ11, Երևան, էջ 539
7. Հայ ժողովրդի պատմություն, հատոր 3, Երևան, 1976, էջ 309
8. Ումառյան Ս., Սյունիքի դիցարան, Երևան, 1981, էջ 30
9. Քոթանջյան Ն., Էջմիածնի ավետարան, Երևան, 2000, էջ 84

ОБРАЗОВАТЕЛЬНО-КУЛЬТУРНЫЕ ОЧАГИ СЮНИКА. ТАТЕВСКИЙ МОНАСТЫРЬ КАК ЦЕНТР ДУХОВНОЙ КУЛЬТУРЫ - БАГДАСАРЯН ЭЛЛАДА - В статье обсуждается роль образовательно-культурных очагов Сюника и представляет грандиозный Татевский монастырь и его историю как а духовной, культурной, образовательной, научной мысли Сюникского мира. Значительна также роль Татевского монастыря в создании древнейших национальных рукописей, подчеркивается также, что средневековая высшая школа была первым университетом христианского мира.

Татевский монастырь сыграл огромную роль не только в жизни Сюника, но и в целом в национальной политической и культурной жизни армянского народа. Статья дает также подробные описания древних рукописей Татевского монастыря.

Ключевые слова: Сюник, образовательно-культурные очаги, центр духовной культуры, Татевский монастырь, христианские песнопения, языческая наука, благотворительность, богословие, Матенадаран.

EDUCATIONAL CENTRES OF SYUNIK. TATEV MONASTERY AS A CENTRE OF SPIRITUAL CULTURE - BAGDASARYAN ELLADA - The article reviews the role of educational and cultural centres of Syunik and presents the grand Tatev monastery and its history as manifestation of spiritual, cultural, educational and scientific thought of Syunik. Significant is the role of Tatev monastery in the creation of ancient ethnic manuscripts. It is also emphasized that the medieval high school was the first university in the Christian world.

Tatev monastery played an immense role not only in Syunik, but on the common national political and cultural life of the Armenian people. The article gives a detailed description of the ancient manuscripts of Tatev monastery.

Keywords: Syunik, educational and cultural centres, centre of spiritual culture, tatev monastery, Christian hymns, science, charity, theology, Matenadaran.